Հայկական
թատրոնի երգեր

623
Լուրա

784.3
Z-25

ՀԱՅԿ 1863 года ԱԿԱՆ

ընտրովի երգեր

Армянския песни

для

фортепиано с пением

ad.

Libitum.

Цена 1р.

Тифлис

Переложил на ноты и издал.

Луи Бэзино.

[illegible]

(1253-ԱՀ)
639-2011
2013
623 ա.հ.

Երգ Աւարայրայ Հայոց



Երգ. յաղթական Շապուհ



1.

Կեցցես դու Շապուհ, կեցցես արքայ,

Քեղ փառք յաղթութեան ամէն տեղ միշտ կայ /կրկ./

Քեղնից դողում է ողջ Յունաստանը

Ոտքիդ տակ ընկաւ.այսօր Բուզանը.

Դէս քաջ Պարս եղբարք. կեցցե կանչեցեք,

Մեր վէս Սաղդեղանց փառքն աւելացրէք /կրկ./

Կեցցե, կեցցե, կեցցէ միշտ Շապուհ և իւր զօրութիւն

Կեցցէ, կեցցէ, կեցցէ միշտ Շապուհ և իւր զօրութիւն:

2.

Անմահ Որմիզդը քեղ մեղ պարգևեց,

Քո աջեղ սուրը նա ինքն սրեց,

Փշրել Թշնամիք, ջնջել Օտարդեն,

Աշխարհս բոլոր պաքսկաղեն.

Դու քո քաջութեամբ անմահ դից [illegible]

Տուիր մեղ խրախույս յաղթել քաջաբար: կեցցէ և այլն.

3.

Տէրն Արշակունեանց Անուշ բերդի մէջ,

Պէտքէ փչանայ դառն վշտի մէջ,

Յաղթութեան դռները անմահից շնորհօք

Բացուում են առջևդ վեհապանծ փառօք,

Դէս քաջ Պարս եղբարք, կեցցե ձայնեցէք

Մեր արքայն Շապուհ դիւցազն կոչեցէքկեցցէ և այլն:

Պ.Պ.

([illegible])

1.

Կեցցա դու Տապուհ, կեցցես արքայ,

Քեզ փառք

ՍԱՄԵԼԻ ԵՐԳ

1.

Կեցցես քաջ Սամել, փառք ու պարծանք հայ անուան.

Կեցցես քաջ Սամել, դու ես մի միայն փրկիչ տան հայկազեան.

Դու որ ուրացող խարդախ քո հօրից վրէժ առնել պատրաստ ես,

Քեզ միայն՝ քեզ միայն փառք հայկազունքս կտանք քեզ՝

դարէ դար յաւիտեան:

Կեցցես քաջ Սամել փառք ու պարծանք հայ անուան,

Կեցցես քաջ Սամել, փառք ու պարծանք հայ անուան:

2.

Այդ մեծ քաջութիւն

Վեհ անունդ կը պահէ,

Այդ ջերմ հաւատը

Քեզ կը պահպանէ

Եւ կը զօրացնէ:

Գիտենք իսկապէս,

Թէ քաջ հայի պէս

Նահատակ կը դառնաս.

Ուստի քեզ միայն փառք

Հայկազունքս կը տանք

Քեզ՝ դարէ դար յաւիտեան:

Կեցցես քաջ Սամել և այլն

3.

Ահա երկնքից

Մեր սուրբ հարքը նայում են

Եւ լոյս պսակը

Գլխիդ բռնելով՝

Քեզ քաջալերում են.

Դու որ քաջ Սամել

Սուրը ձեռքդ առած՝

Մենք էլ քեզ միայն փառք

Եռանդեամբ կտանք

Քեզ՝ դարէ դար յաւիտեան:

Կեցցես քաջ Սամել և այլն

Գ.Գ.

Սամելի երգ.

Երաժշտութիւն Գ. [illegible]



Աղօթք Նախարարաց Հայոց

Երաժշտ. Գ. Մ[illegible]



Աստուած ողորմած,

տես մեր խղճութիւն, ընչէր Պարսից ույժ զօրութիւն,

զօրացրու Սամէլին, համողել Վահանին.

Որ քաջաբար

Վանէ ոսոխք, պահէ կրօնք։

Սիրտ տուր Վահանին, օգնելով հայ ազգին,

Թոյլ տայ Պապ արքային, տիրել Թագին։

Վահանն անօրէն, թէ չդառնա հարէն,

Տուր Սամէլին սիրտ քարեղէն։ Սէր ազգին, սէր կրօնի

Նրա սրտում տպաւորէ։

Ինչպէս քաջ հայ, հանել հօրից վրէժն ազգի։

Ազատիր Պապին՝ կալ ժառանգ հայ Թագին.

Հասցրու մեր ազգին իր հին փառքին։

Բաւ է տէր բաւ է, այս ի՞նչ մեծ ցաւ է,

Ինչի՞ Վահան մեզ կդաւէ.

պահիր մեզ միաբան, լինել միշտ օրհնաբան

քո սուրբ անուան. և գոհութիւն տալ յաւիտեան։

Ապաքէն Աստուած,

ույժ տուր մեր տկար բազկաց ընդդեմ՝ կալ բռնութեանց

Օտար ազգաց։

Սրբընդմայ դարպաս

Լսէր քաջդ Վաչան, մեր դէք այսպէս կամին,
Որ դու շուտով դարձնես հայերն իրանց դենից և Օրենքից.
Լսէր Շապուհի կամքն եսպէս է՝ մինչև չառնես նորա
հրաման

Անեղ անդրդուելի, չես հասնիր քո մեծ փափագին,
Եւ արժան չես լինի հայկական թագին:
Այդ բան միայն կլինի այն ժամանակ,
Երբ Հայաստանը կլինի մեր հպատակ.
Եւ Յոյներից հեռի մնալով կը լինի մեզ միշտ դենակից
և միշտ դաշնակից:

Երաժշտ. Գ. [illegible]

Allegretto

[illegible]

Ե՞ր հեռանաս քո մայրենի աշխարհից,

Կարոտ թողուս սերտ բարեկամք քեզնից·

Մեր ամենիս դու մայր էիր գթառատ,

Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռօք մեր վէրքերը շատ անգամ

Լուանայիր դեղ դընէիր ամէն ժամ.

Քո մազերից ոլորէիր վիրակապ,

Քո բոլոր կեանքն ազգիս համար էր ազատ:

Արդ հայոց զօրքն իրանց մօրից որբանայ,

Վրաց ազգը քո խնամօք պերճանայ.

Հայաստանը զրկէ իւր սուրբ Շուշանից

Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի

Մեր սիրտ հոգին քեզ հետ տանիս մաքրուհի.

Մնաս բարեաւ մեր լոյս հաւատ քեզ ընկեր,

Աջն ու խաչն քեզ պահապան զօր գիշեր:

([illegible])

Այս տարուան ներկայացրած մի քանի հայկական թատրոնական խաղարկութեանց մէջ երգուած եղանակները ժողովրդի սրտին հաճոյական երևալով, ամէն տեղից եկեցինք ցանկութիւն այդ երգերի երաժշտական խաղերն ունենալու։ Ուստի մենք քաջալերուեցանք աջակարիկ շատերի ցանկութիւնը ի կատար ածելու և վստահացանք տալ այն երգերի խաղերը առանձին տետրակներով։

Առաջին երգի եղանակն առած է Գերմանականից, երկրորդինը շարադրութիւնն է անմահ յիշատակաց արժանի Կ.Պօլսեցի Երանեանի, իսկ մնացեալ չորս երգերի եղանակներն Գ.Սիրավեանցի աշխատութիւնն է, որ որքան կարելի է՝ աշխատել է համեմատացնել հայոց եկեղեցական [illegible] երաժշտութեանցը, ավելի լավ համոզելով հայոց եղանակներին ներքնական քաղ և նշանակութիւն տալ, քան Օտարինը հայացնել։ Յուսանք, թէ այս եղանակներն սիրելի ընդունելութիւն կգտնեն երգասէր հայերից և կը քաջալերեն մեզ այսուհետև շարունակել այսպիսի տետրակներ հայկական երաժշտութիւնը յառաջ տանելու։

ՀՀ Ազգային գրադարան
NL0684961

ՀՀ Ազգային գրադարան
NL0684961

623

784
Z-25